

22.

ԱՐՇՐՈՒՆ ՀՈՎՅԱՆՆԻՍՅԱՆ. «ԱՎԻԱՑԻԱՆ ԱՐՑԱԽՅԱՆ ԳՈՅԱՄԱՐՏՈՒՄ»,
«ԱՎԻԱՄԱՆԻԱ» ԳԻՏԱՄԱՐԶԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ,
2006 թ., 94 էջ, ՏՊԱՔԱՆԱԿԸ` 200 ՕՐԻՆԱԿ

ԱՐՄԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Գիրքը բաղկացած է երեք գլխից: Առաջին գլխում ներկայացված են Հայաստանի քաղաքացիական ավիացիայի գործողությունները Հայաստանի և Արցախի միջև օդային կամուրջ ստեղծելու գործում, Հայաստանի ռազմաօդային ուժերի ստեղծման գործընթացը, նրանց մարտական կիրառման և կորուստների ժամանակագրությունը: Նկարագրված են նաև Ադրբեջանի օդուժի ստեղծման, մարտական կիրառման ու կորուստների պատմությունը, ինչպես նաև հիմնական բազաները:

Երկրորդ գլխում հեղինակը վերլուծության է ենթարկում ռազմական ավիացիայի զարգացման համաշխարհային միտումները, կոնկրետ օրինակներ բերում Աֆղանստանում և Իրաքում օդուժի արդյունավետ կիրառման վերաբերյալ: Բացի դրանից, գրքում քննարկվում են Հայաստանի ռազմաօդային ուժերի՝ ռազմական գործողությունների թատերաբեմի պահանջներին համապատասխան, ժամանակակից ռազմական թռչող սարքերի և հակաօդային պաշտպանության համակարգեր ունենալու անհրաժեշտությունը:

Երրորդ գլուխը նվիրված է արցախյան պատերազմում երկու կողմերի կիրառած թռչող սարքերին, դրանց սպառազինությունը և հակաօդային պաշտպանության համակարգերին: Ներկայացվում են այն սար-

քերը, որոնք, ըստ մամուլի որոշ տեղեկությունների, վերջին տարիներին ձեռք է բերել Ադրբեջանը:

Մինչ այս գրքի հրատարակվելն Արցախյան պատերազմում օդուժի օգտագործման հարցերը քննարկվել են Ա. Զիրուխյանի «Հերոսամարտի պողպատե թևերը» և Մ. Ա. Ժիրողովի «Черный сад скорби» (авиация в армяно-азербайджанском конфликте)¹: Արծրուն Հովհաննիսյանի գիրքն արժևորվում է նրանով, որ նրանում առաջին անգամ ներկայացվում են Հայաստանի ռազմաօդային ուժերի կայացման փուլերը, նրանց մարտական կիրառումը և զարգացման հեռանկարները:

Ներկայացնելով Հայաստանի ռազմական ավիացիայի գործողությունները, հեղինակը նշում է միայն թվականները և այն բնակավայրերը, որոնց մոտակայքում հարված է հասցվել թշնամուն: Սակայն, ընթերցողի մոտ այդ գործողությունների մասին առավել ընդգրկուն պատկերացում ստեղծելու համար ցանկալի կլինեք նաև հստակ նշել ճակատի այն հատվածը, որտեղ կիրառվել է Հայաստանի օդուժը, ինչպես նաև յուրաքանչյուր ռազմական առաջադրանքի կատարմանը մասնակցած ուժերը:

Ցանկալի կլինեք նաև գնահատել երկու կողմերի ավիացիայի արդյունավետությունը, ասել է թե՛ ինչպես են օդային հարվածներն ազդել որոշակի ռազմական գործողությունների և մարտերի ընթացքի վրա:

Հեղինակը հղում է մամուլի հաղորդագրությունները, որոնք հիշատակում են Ադրբեջանի կողմից ՄԻԳ-29 և Ֆ-16 ինքնաթիռների հնարավոր ձեռքբերումը, սակայն այդ տեղեկություններն այլ տեղեկություններով չեն հաստատվում: Առհասարակ, սպառազինությունների մասին տվյալներ մեջբերելիս ավելի ճիշտ կլինեք օգտագործել ոչ այնքան մա-

¹ Վերը նշված հետազոտությունը նույն հեղինակը զարգացրել է հետագայում՝ հեռակալ հոդվածի հիման վրա՝ **М.А. Жирохов**, «Карабах: хроника воздушной войны», *Авиамастер* (Москва).-2000. # 6, http://artofwar.ru/z/zhirohow_m_a/text_0100.shtml: Գրախոսությունը հանձնելուց հետո մեր ձեռքն անցավ նորերս լույս տեսած մի աշխատություն ևս՝ Գ. Գեղամյան, Ռ. Սահակյան, Դրվագներ հայ օդաչուների Արցախում մղված հերոսական պայքարից (Եր., 2006, 77 էջ):

մուլի հաղորդագրությունները, որքան առավել վստահելի աղբյուրները, մասնավորապես մասնագիտական գրականությունը, ինչպիսիք են ՄԱԿ-ի սովորական սպառազինությունների ցուցակը (ռեգիստրը), ռազմական փորձագետների շրջանում հեղինակավոր հրապարակումները, օրինակ՝ Military Balance կամ Jane's վերլուծական հիմնարկության պարբերականները:

Ընդհանուր առմամբ, հեղինակը կատարել է կարևոր և օգտակար աշխատանք: Ուսումնասիրությունը լուսաբանում է այն նշանակալի դերակատարումը, որ ունեցել են հայ օդաչուները Արցախի փրկության և պատերազմում հաղթանակելու գործում: Գիրքն, անկասկած, հետքերի կլինի ռազմական փորձագետների, ռազմական պատմությամբ հետաքրքրվողների և ընթերցող լայն շրջանների համար: